ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

Առաջադրանքների լուծման համար տրվում է **75** րոպե | **3-4**-րդ դասարաններ

- **Յուրաքանչյուր առաջադրանքի համար տրված պատասխաններից ճիշտ է միայն մեկը:**
- **Չլուծված առաջադրանքի համար միավորներ չեն գումարվում և չեն հանվում:**
- **Մրցույթի մասնակիցը կարող է վաստակել առավելագույնը 110 միավոր:**
- **Մրցույթի ավարտին առաջադրանքների թերթիկը մնում է մասնակցի մոտ:**
- **Մրցույթի մասնակիցներին ներկայացվող գլխավոր պահանջը առաջադրանքներն ինքնուրույն և ազնվորեն կատարելն է:**

3 միավոր գնահատվող առաջադրանքներ

1. Ո՞ր կենդանուն կարող ենք հանդիպել և՛ գազանանոցում, և՛ շախմատի տախտակին:

Ա. դելֆին *Բ.* արջ *Գ.* փիղ *Դ.* գայլ *Ե.* աղվես

2. Պատասխանի տարբերակներում բերված բառերից մեկը մյուսների ընտանիքին չի պատկանում: Ո՞ր բառն է դա:

Ա. մորենի *Բ.* մայրենի *Գ.* լորենի *Դ.* սալորենի *Ե.* ձիթենի

3. Քանի՞ տառի օգնությամբ կարող ենք իրականացնել նկարում պատկերվածը:



Ա. երկու *Բ.* երեք *Գ.* չորս *Դ.* հինգ *Ե.* վեց

4. Ո՞ր շարքի վանկերը վերադասավորելով՝ կստանաս գույն նշանակող բառ:

Ա. կա, գա, նա, գույն, շա
Բ. կա, նա, գույն, շա, կա
Գ. շա, նա, գա, կա, գուն
Դ. գույն, շա, կա, մա, նա
Ե. նա, բույն, կա, շա, գա

5. Մեղվիկը թաքցրել է պատասխանը: Գտի՛ր այն:

մէկքրեաննա – մեքենա =

Ա. էներգիա *Բ.* Աննա *Գ.* մենք *Դ.* էկրան *Ե.* ելակ

6. Ո՞ր տառը կարող ենք կցել **աղ** բառին և՛ սկզբից, և՛ վերջից, որպեսզի երկու դեպքում էլ ստացվեն նոր բառեր:

Ա. պ *Բ.* տ *Գ.* շ *Դ.* կ *Ե.* դ

7. Յուրաքանչյուր քայլում բառի մեջ փոխելով մեկ տառ՝ ***մուկ***-ից ստացել են ***փիղ***: Ո՞ր բառը պետք է գրել մեղվիկի փոխարեն:

մուկ → մուր → → հոր → հող → փող → փիղ

Ա. փոր *Բ.* շոր *Գ.* լոր *Դ.* մութ *Ե.* հուր

8. Տառը «ներդրվել» է տրված պատկերի մեջ: Ի՞նչ բառ է ստացվել:



Ա. կերոն *Բ.* կրոն *Գ.* նկար *Դ.* ներկ *Ե.* կենվոր

9. ***Մեքենան*** իրեն հարազատ բան գտավ ***նախիրի*** մեջ, ***գրապահարանն*** էլ՝ ***անանուխի***, և կազմվեցին ***մեքենա-նախիր*** և ***գրապահարան-անանուխ*** զույգերը: ***Հեռախոսն*** էլ ճիշտ նույնպիսի հարազատություն գտավ ստորև բերված բառերից մեկի մեջ և նրա հետ զույգ կազմեց: Գտի՛ր ***հեռախոս*** բառի զույգը:

Ա. ոսկի *Բ.* հեռու *Գ.* խոսք *Դ.* լսափող *Ե.* խոսափող

10. Այբբենական կարգով դասավորվելու դեպքում ո՞ր բառը կլինի չորրորդը:

Ա. սրտաբան *Բ.* ջնջում *Գ.* տող *Դ.* սրունք *Ե.* դպրոց

4 միավոր գնահատվող առաջադրանքներ

11. Տրված են կենդանիների ձայն նշանակող բառեր՝ ***բառաչյուն, վրնջյուն, մկկոց, մլավոց, հաչոց, մռնչյուն:*** Ո՞ր կենդանին է մնացել «ձայնազուրկ»:

Ա. ձին *Բ.* կատուն *Գ.* այծը *Դ.* խոզը *Ե.* կովը

12. Ստորև բերված բառերից չորսը նույն տան մեջ են ապրում, իսկ մեկն այդ տուն հյուր է եկել նույն փողոցի ծայրի տնից: Գտի՛ր հյուրին:

Ա. քիթ *Բ.* ձեռք *Գ.* շրթունք *Դ.* աչք *Ե.* ականջ

13. Ո՞ր կենդանին է թաքնված ***ռիմակ, չամիչ, խոյակ, արձան, բոպե*** բառաշարքում:

Ա. ոչխար *Բ.* ոզնի *Գ.* հովազ *Դ.* չղջիկ *Ե.* կաքավ

14. Ժամացույցի թվերի փոխարեն գրված են տառեր: Ինչո՞ւ են ընտրված հենց այդ տառերը:



Ա. Բոլորը բաղաձայն են:
Բ. Համապատասխանում են տառերի թվային արժեքին:
Գ. Ընտրվել է այբուբենի յուրաքանչյուր երրորդ տառը:
Դ. Համապատասխանում են տառերի հերթականությանը այբուբենում:
Ե. Բոլորը ձայնավոր են:

Վերարտադրումը միայն «Այբ» հասանելիությամբ

15. Որտե՞ղ է թաքնված ***ցանկանալ*** բառի «ընկերը»:

Ա. գլուխ ***Բ.*** կոշիկ ***Գ.*** ձեռք ***Դ.*** գլխարկ ***Ե.*** լեզու

16. Ի՞նչն է՝ ծովում չկա, գետում մեկն է:
Հսկա օվկիանոսում իր տեղը չունի:
Հենց հեղեղ եղավ, կկրկնապատկվի և արագ կվազի:

Ա. աղ ***Բ.*** ցեխաջուր ***Գ.*** *ղ* տառը ***Դ.*** *է* տառը ***Ե.*** կարմրախայտ

17. 4-տառանի ո՞ր բառի հոգնակին նույնպես 4-տառանի է:

Ա. գիրք ***Բ.*** դեմք ***Գ.*** սյուն ***Դ.*** բույն ***Ե.*** դունչ

18. Աջ կողմում բերված է տառային ծածկագիր, որում յուրաքանչյուր տառին համապատասխանում է մեկ թվանշան: Նույն տառերին համապատասխանում են նույն թվանշանները: Բերված տարբերակներից ո՞րն է համապատասխանում այդ տառային ծածկագրին:

Ջ ՈՒ Ր
\+
Հ Ո Ղ
Բ ՈՒ Ց Ս

Ա.
729
\+
507
1236

Բ.
429
\+
807
1236

Գ.
529
\+
707
1236

Դ.
329
\+
907
1236

Ե.
629
\+
607
1236

19. Ոչ տեսնում են, ոչ հասկանում,
Ոչ ուզում են, ոչ ստանում,
Ցերեկն ամբողջ ման են գալիս,
Գիշերն ամբողջ հանգստանում: (*ժողովրդական հանելուկ*)

Ա. արևի ճառագայթ ***Բ.*** վարորդներ ***Գ.*** երեխաներ ***Դ.*** ակնոցներ ***Ե.*** կոշիկներ

20. -***Մեկնելուց առաջ ձեռք բերեք չոր սունկ***, - համոզում էր վաճառողը:
Պայմանում թաքնված գումարելիներով հաշվի՛ր, թե ամենաշատը քանի սունկ էր առաջարկում վաճառողը:

Ա. ութ ***Բ.*** յոթ ***Գ.*** հինգ ***Դ.*** չորս ***Ե.*** երեք

5 միավոր գնահատվող առաջադրանքներ

21. Պատասխանի տարբերակներում բերված ո՞ր տառախմբի ոչ մի տառը չկա ստվերանշված վանդակներում:



Ա. մ, ր, դ ***Բ.*** թ, ռ, ն ***Գ.*** ն, ր, դ ***Դ.*** ռ, ց, դ ***Ե.*** ծ, ր, թ

22. Քանի՞ թռչունի անուն կգտնես ***կաքավաբերդ, բազկաթոռ, աշուն, ինքնահավան, պայծառ, սալորենի, բույն, լեզու, դեղձանիկ, իշամեղու*** բառաշարքում՝ տառերը չտեղաշարժելով:

Ա. 7 ***Բ.*** 6 ***Գ.*** 5 ***Դ.*** 4 ***Ե.*** 3

23. ***Թոկ, սեպ, նուշ, պատ, նուռ*** բառերը պատրաստվում են ելույթ ունենալու մի աճպարարական ներկայացման մեջ՝ կատարելով նույնատիպ հնարք: Ցավոք, նրանցից մեկը չի կարողանում այդ հնարքը կատարել և չի մասնակցի ներկայացմանը: Ո՞ր բառն է դա:

Ա. նուռ ***Բ.*** պատ ***Գ.*** նուշ ***Դ.*** սեպ ***Ե.*** թոկ

24. ***Ականջին օղ անել*** դարձվածքը նշանակում է՝

Ա. անտարբերության մատնել որևէ բան.
Բ. ականջները սրել.
Գ. ձանձրացնել՝ շարունակ խոսելով.
Դ. մշտապես հիշել.
Ե. ինչ-որ բան հայտնել մեկին:

25. Արան բակ իջնելիս վերցրեց արկղ, Սեդան՝ սափոր, Կարոն՝ կողով: Ի՞նչ վերցրեց Գնելը բակ իջնելիս:

Ա. գիրք ***Բ.*** դույլ ***Գ.*** պայուսակ ***Դ.*** գնդակ ***Ե.*** զամբյուղ

26. Ի՞նչ բառ է թաքցրել մեղվիկը:

հասկ, տաշվածք, ավազան, անտառապահ, նախաճաշարան,

Ա. ցորեն ***Բ.*** նապաստակ ***Գ.*** առագաստանավակ
Դ. կարկանդակ ***Ե.*** բացականչական

27. Բառերից մեկը չի ենթարկվում մի ընդհանուր հետաքրքիր օրինաչափության: Ո՞ր բառն է դա:

Ա. արձան ***Բ.*** վանդակ ***Գ.*** ջեռոց ***Դ.*** ոստյուն ***Ե.*** հատոր

28. Բոլոր բառերում, բացի մեկից, մեկ տառի փոփոխության արդյունքում ինչ-որ բաներ կշատանան: Ո՞ր բառը կմնա միայնակ:

Ա. շորոր ***Բ.*** աքլոր ***Գ.*** մասուր ***Դ.*** սալոր ***Ե.*** օրոր

Հրապարակումը «Այբ» հանձնաժողովի